տարուել, նրա խնդիրն անկատար է, նրա կրօնի թագը պակասում է, նրա կեանքը ճշմարիտ բովանդակութիւնից զուրկ է։ Արդեօք այս մեծ գործն մեր մէջ սկսուած է։ Ի՞նչպէս, երբ պէտք է մենք ա՛յլ մարդ դառնանք։ Ժամանակը մեզ փոխել չէ կարող։ Մի միայն Քրիստոս կարող է այդ։ Ապա, ուրե՛մն գնանք Յիսուս Քրիստոսի մօտ։

Թարգմ. Արտակ վարդապետ

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հանգստեան պաշտօններ կատարուեցին Մայր տաճարում Հոկտեմբերի 24-ին՝ Երուսաղէմի պատրիարք հանգուցեալ Յարութիւն արքեպիսկոպոսի համար և Նոյեմբերի 7-ին՝ Թիֆլիզի Հայոց առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսի համար։ Ներկայ էր Վեհափառ Հայրապետը և խուռն բազմութիւն աղօթաւորների։